ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն 129 -Ա

«26» ՄԱՅԻՍ 2022Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ, ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ-ի մարտի 3-ի «Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ.-ի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպատարանի ենթակայության պետական սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ ըստ կազմակերպությունների:

1.1) «Վայքի ԲՄ» ՓԲԸ

2021թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 123000 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 61500 ՀՀ դրամ:

1.2) «Ջերմուկի ԱԿ» ՓԲԸ

2021թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 3108000 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 1554000 ՀՀ դրամ:

2. Սահմանել, որ կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում են մինչև 2022 թվականի հոկտեմբերի 1-ը:

5/26/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր